

Գրական-գեղագիտական սալոնում



Exported from Wikisource on 01/20/19

Գրական- գեղագիտական սալոնում

[Աշոտ Աթանասյան](#)

Սալոնի ուրբաթ օրվա երեկույթը, որ նվիրված էր Կորոսկովի նոր գրած «Семирамида» պոեմային, բացվեց Ա. Աթանասյանի նախագահությամբ և տ. Մկրտչյանի մի գրույցով. տիկինը ճշգրտեց այն փաստը, որ վերջին երեք-չորս տարիներում ռուս հասարակությունը սկսել է առանձնապես հետաքրքրվել հայի հոգեկան կյանքով, նրա գրականությամբ ու պատմական ապրումներով. Մ. Գորկիի «Ժողովածուն», Վ. Բրյուսովի «Поэзия Арменія»-ն մի-մի շոշափելի և գնահատելի ապացույցներ են Ռուսաստանում, իսկ Անատոլ Ֆրանսի հայտնի դարձվածը, թե «Հայաստանը Ֆրանսիայի քույրն է»՝ լոկ մի գեղեցիկ ֆրագա չէ հոշակավոր ֆրանսիացի գրողի կողմից, այլ մի ըմբռնում մեր հոգեկան ու ստեղծագործական կարողության:

Այդօրինակ գնահատելի արտահայտություններից է մեկն է նաև Կորոսկովի «Семирамида» նոր պոեման, որը նպատակ ունի հանձին Արայի պատկերացնել լեռնոտ, վեհ, ազատության ու սեփական ստեղծագործության սիրահար հային, երբ նրա առաջ դրված է ուրիշ ավելի մեծ, բախտավոր ազգերի և պետությունների հետ իմանալու ու նրանց

մեջ ձուլվելու դիլեմմա: Հայը միշտ գերադասել է իր թեն փոքր, գուցե թույլը, բայց ինքնուրույնը՝ և դրա համար նա կանգ չի առել կրելու ամեն տեսակ գոհեր, հուսալով, որ ուշ թե շուտ նա կհասնի իր իդեալներին:

Այնուհետև հարգելի տիկինը տվեց «Շամիրամ» պոեմայիս բովանդակությունը, գտնելով որ նյութի մշակումը կատարված է աջող և միայն վերջը՝ Շամիրամի մահը՝ դուրս է եկել Խորենացուց տարբեր եղանակով: Ջեկուցանողը մատնանշեց պոեմայի նաև թույլ կողմերը՝ երկարություն, մեր ներկա ժամանակի ոգու դրոշմը, սակայն այդ բոլոր պակասներով հանդերձ՝ նա գտնում է, որ «Շամիրամը» աջող փորձ է երիտասարդ բանաստեղծի կողմից:

Ցանկանալով ներկա եղող հասարակությանը ճիշտ գաղափար տալ Կորոտկովի նոր պոեմայիս մասին, զեկուցանողը գեղեցիկ առոգանությամբ և հարազատ շեշտով կարդաց պոեմայիս առաջին մասը. ապա սքանչելի երաժշտականությամբ և շատ ճկուն ձայնով կարդաց օր. Շուշանիկ Աբովյան (մեր մեծ բանաստեղծ Խաչատուր Աբովյանի թոռը):

Երկուսն էլ արժանացան բուռն ծափերի: Ընդմիջումի ժամանակ մանստրո Բրոջիի աշակերտները երգեցին մի շարք գեղեցիկ կտորներ, իսկ ինքը, հասարակության ոգևորված «բիսերի» տարափի տակ վարպետորեն երգեց չորս կտոր գանազան արիաներ:

Ջեկուցման վերջում պոեմայիս շուրջ տեղի ունեցավ մտքերի փոխանակություն, որոնք եկան լրացնելու և հիմնավորելու զեկուցանող տիկնոջ կարծիքները:

Երեկոյթը, որ գրավել էր բավական
հասարակություն, ավարտվեց 11½-ին:

About this digital edition

This e-book comes from the online library [Wikisource](http://wikisource.org)^[1]. This multilingual digital library, built by volunteers, is committed to developing a free accessible collection of publications of every kind: novels, poems, magazines, letters...

We distribute our books for free, starting from works not copyrighted or published under a free license. You are free to use our e-books for any purpose (including commercial exploitation), under the terms of the [Creative Commons Attribution-ShareAlike 3.0 Unported](http://creativecommons.org/licenses/by-sa/3.0)^[2] license or, at your choice, those of the [GNU FDL](http://www.gnu.org/copyleft/fdl.html)^[3].

Wikisource is constantly looking for new members. During the realization of this book, it's possible that we made some errors. You can report them at [this page](#)^[4].

The following users contributed to this book:

- Գաբրիելյան Աշոտ

-
1. [↑ http://wikisource.org](http://wikisource.org)
 2. [↑ http://www.creativecommons.org/licenses/by-sa/3.0](http://www.creativecommons.org/licenses/by-sa/3.0)
 3. [↑ http://www.gnu.org/copyleft/fdl.html](http://www.gnu.org/copyleft/fdl.html)
 4. [↑ http://wikisource.org/wiki/Wikisource:Scriptorium](http://wikisource.org/wiki/Wikisource:Scriptorium)